ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 07.03.2019թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ՍՑ-ԱՄ-2019/47

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձն՝ ի դեմս Միեր Անանյանի ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 26.02.2019թ. թիվ 26/26/3064-19 գրությամբ «ՌՎ Պրոջեկտս» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, «Հայաստանի հեռուստատեսային և ռադիոհաղորդիչ ցանց» ՓԲԸ-ի 19.02.2019թ. թիվ 31-110 գրության հիման վրա, 26.02.2019թ. թիվ 26/26/3064-19 գրությամբ դիմել է ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ խնդրելով նախաձեռնել «ՌՎ Պրոջեկտս» ՍՊԸ-ին (այսուհետ՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. **<u>«ՌՎ Պրոջեկտս» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>**

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի կողմից սույն որոշումը կայացվելու օրվա դրությամբ «ՌՎ Պրոջեկտս» ՍՊԸ-ի կողմից որևէ դիրքորոշում չի ներկայացվել:

Ընկերությունը, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ԱՄ-2019/47 ընթացակարգի շրջանակներում 01.03.2019թ. ժամը 10:15-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

3. **<u>«Հայաստանի հեռուստատեսային և ռադիոհաղորդիչ ցանց» ՓԲԸ-ի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>**

«Հայաստանի հեռուստատեսային և ռադիոհաղորդիչ ցանց» ՓԲԸ-ն (այսուհետ՝ Պատվիրատու) ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 19.02.2019թ. թիվ 31-110 գրությամբ հայտնել է, որ «ՌՎ Պրոջեկտս» ՍՊԸ-ի հետ 26.12.2018թ. կնքված թիվ «ՀՀՌՑ-ԷԱՃԱՊՁԲ-18/37» ծածկագրով պայմանագրի շրջանակներում Ընկերությունը խախտել է պայմանագրով նախատեսված պարտավորություն՝ սահմանված ժամկետում ապրանքը չի մատակարարվել, որը հանգեցրել է Պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ԱՄ-2019/47 ընթացակարգի շրջանակներում 01.03.2019թ. ժամը 10:15-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. **<u>ՍՑ-ԱՄ-2019/47 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>**

ՍՑ-ԱՄ-2019/47 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. «Հայաստանի հեռուստատեսային և ռադիոհաղորդիչ ցանց» ՓԲԸ-ի և «ՌՎ Պրոջեկտս» ՍՊԸ-ի միջև 26.12.2018թ. կնքվել է «ՀՀՌՑ-ԷԱՃԱՊՁԲ-18/37-1» ծածկագրով

ապրանքի մատակարարման պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր), որի համաձայն՝ «ՌՎ Պրոջեկտս» ՍՊԸ-ն պարտավորվել է պայմանագրով սահմանված ժամկետում «Հայաստանի հեռուստատեսային և ռադիոհաղորդիչ ցանց» ՓԲԸ-ին մատակարարել 1 հատ հեռախոսային կայան:

2. «ՌՎ Պրոջեկտս» ՍՊԸ-ին ուղղված 19.02.2019թ. թիվ 31-111 գրությամբ «Հայաստանի հեռուստատեսային և ռադիոհաղորդիչ ցանց» ՓԲԸ-ն հայտնել է, որ հիմք ընդունելով Պայմանագրի 2.1.7 կետի պահանջները՝ Պատվիրատուն 18.02.2019թ. միակողմանի լրիվ լուծել է Պայմանագիրը:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ Մհեր Անանյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 26.02.2019թ. թիվ 26/26/3064-19 գրությունը, Հայաստանի հեռուստատեսային և ռադիոհաղորդիչ ցանց» ՓԲԸ-ի 19.02.2019թ. թիվ 31-110 գրությունը և կից փաստաթղթերը հայտնում եմ հետևյալը.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 345-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտավորության ուժով մի անձը (պարտապանը) պարտավոր է մեկ այլ անձի (պարտատիրոջ) օգտին կատարել որոշակի գործողություն. այն է՝ վճարել դրամ, հանձնել գույք, կատարել աշխատանք, մատուցել ծառայություն և այլն, կամ ձեռնպահ մնալ որոշակի գործողություն կատարելուց, իսկ պարտատերն իրավունք ունի պարտապանից պահանջել կատարելու իր պարտականությունը:

Նույն օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների

ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. ***խախտել է պայմանագրով նախատեսված*** կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած ***պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը*** կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

«Հայաստանի հեռուստատեսային և ռադիոհաղորդիչ ցանց» ՓԲԸ-ի և «ՌՎ Պրոջեկտս» ՍՊԸ-ի միջև 26.12.2018թ. կնքվել է «ՀՀՌՑ-ԷԱՃԱՊՁԲ-18/37-1» ծածկագրով ապրանքի մատակարարման պայմանագիրը, որի համաձայն՝ «ՌՎ Պրոջեկտս» ՍՊԸ-ն պարտավորվել է պայմանագրով սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացուցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

Պայմանագրի տեխնիկական բնութագրի համաձայն՝ «ՌՎ Պրոջեկտս» ՍՊԸ-ն պարտավորվել է Պայմանագրի հաստատման օրվանից 20 օրացուցային օրվա ընթացքում

«Հայաստանի հեռուստատեսային և ռադիոհաղորդիչ ցանց» ՓԲԸ-ին մատակարարել 1 հատ հեռախոսային կայան (մինի հեռախոսակայան/ KX-NS500):

Կողմերի միջև 15.01.2019թ. կնքվել է Պայմանագրի թիվ 1 համաձայնագիրը, որի համաձայն՝ կողմերը որոշել են Պայմանագրի տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցում կատարել փոփոխություն՝ Ապրանքի մատակարարումը երկարաձգել մինչև 04.02.2019թ.:

«ՌՎ Պրոջեկտս» ՍՊԸ-ին ուղղված 19.02.2019թ. թիվ 31-111 գրությամբ «Հայաստանի հեռուստատեսային և ռադիոհաղորդիչ ցանց» ՓԲԸ-ն հայտնել է, որ հիմք ընդունելով Պայմանագրի 2.1.7 կետի պահանջները՝ Պատվիրատուն 18.02.2019թ. միակողմանի լրիվ լուծել է Պայմանագիրը, քանի որ Ընկերության կողմից Պայմանագրով սահմանված ժամկետում ապրանք չի մատակարարվել:

Այսպիսով՝ Պայմանագրի 2.1.7-րդ կետի համաձայն՝ Գնորդն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 5 օրից ավելի:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետը սահմանում է, որ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում խախտել է պայմանագրով նախատեսված պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը:

Այսպիսով՝ «ՌՎ Պրոջեկտս» ՍՊԸ-ն, Պայմանագրի 15.01.2019թ. թիվ 1 համաձայնագրի համաձայն, պարտավորվել է մինչև 04.02.2019թ. Պատվիրատուին մատարակարարել մեկ հատ հեռախոսային կայան, որը սակայն Ընկերության կողմից նշված ժամկետում չի մատակարարվել:

Պայմանագրի 2.1.7.1-րդ ենթակետի համաձայն՝ Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե ***ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 5 օրից ավելի:***

Այսպիսով՝ արձանագրում եմ, որ «ՌՎ Պրոջեկտս» ՍՊԸ-ի կողմից ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 5 օրից ավելի, որի հետևանքով Ընկերությունը թույլ է տվել Պայմանագրի էական խախտում:

Գտնում եմ, որ «ՌՎ Պրոջեկտս» ՍՊԸ-ն թույլ է տվել Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված պայմանագրային պարտավորության խախտում, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ անձը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 26.02.2019թ. թիվ 26/26/3064-19 գրությամբ «ՌՎ Պրոջեկտս» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը բավարարել և «ՌՎ Պրոջեկտս» ՍՊԸ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված երկու տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ ՄՀԵՐ ԱՆԱՆՅԱՆ